

Յայտագիրը իրօք փորձ մըն էր դուրս ելլելու միօրինակ առօրեայէն ու տրուելու ուրախութեան անհոգ թեւերուն: Նրաժշտութիւն, քախտախաղ ու գուարքաքանութիւն, ասոնք էին որ կը կազմէին յայտագրին կորիզը, որոնք անտարակոյս ներկաները լեցունքին ամանորի խանդավառ յայտերով:

Յայտագրի աւարտին, Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքը ըրաւ, ուրտեղ շնչոնց կեանքի մէջ վերանորոգման կարեւոր գաղափարը: «Հայր Մեր»ի երգեցողութեամբ աւարտեցաւ երեկոյթը:

Սաղիմահայ եին սովորութեան համաձայն, կէս գիշերին, ամբողջ քաղաքի զանգակներուն հետ, Սուրբ Յակոբայ մեծ եւ փոքր զանգակները եւս սկսան ղողանջել, մինչ սաներ եւ ժողովուրդ վանքին մեծ բակը հաւաքուած կ'երգէին «Փառք ի քարոնմս» օրհներգութիւնը:

Միաքանութեան հոգեւորական անդամները, ժառ. վարժարանի Ամանորի երեկոյթէն յետոյ Պատրիարքադ հաւաքունեցան եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ միասին ընթրիք ունեցան:

Բագրատ Արդ.

ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՎ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀՆԴԱԿԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ, Տիար Լեւոն Տէր Պետրոսեան, պատկառելի շքախումբով եռօրեայ պաշտօնական այցելութիւն մը տուաւ Հնդկաստան:

Նախագահը իր շքախումբով Նիւ Տելչի ժամանեց Զորեքշարթի 13 Դեկտեմբերին, ու յաջորդ օրը սկսաւ իր պաշտօնական այցելութիւններուն, ու հանդիպում ունեցաւ Հնդկաստանի նախագահին, վարչապետին և այլ պաշտօնական անձանց հետ, ստորագրելով կարեւոր համաձայնութիւններ երկու պետութիւններուն միջեւ:

Նախագահ Տէր Պետրոսեան չմոռցաւ հնդկահայ գաղութը ու կալիաթա ժամանեց Շարթ 16 Դեկտեմբերին, ուր դիմաւորուեցաւ պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութեանց կողմէ: Օդակայան ներկայ էին Հնդկաստանի և Մայրաքոյն Արեւելքի Հայոց Հայրապետական Պատուիրակ, Գերշ. Տ. Աղան Ս. Արք. Պալիօզեան, Արթ. Տ. Սահակ Քահանայ Սահակեան, եկեղեցւոյ վարչականներ Տիար Զօրտըն և Մանուկ: Սրբազան Հայրը Սիտիէն յատկապէս կալիաթա ժամանած էր, նախագահը անձամբ դիմաւորելու համար:

Նախագահը օդանաւէն վար գալով ողջունեց բոլոր պաշտօնական անձանց, և ի գարմանս ներկաներուն ողջագուրեց Աղան Սրբազան Հօր:

Փոքր դադարէ ետք նախագահը այցելեց Հայոց Մարդասիրական Զեմարանը, ուր ուսանողութիւն և գաղութի ներկայացուցիչներ որոտընդոտ ծափերով դիմաւորեցին նախագահը: Քայլերգներու երգեցողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ապա գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Սրբազան Հօր ու նախագահի խօսքերէն ետք, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակութիւն:

Նախագահը ներկաներուն մօտենալով առանձինն առանձինն բարեւեց ու ապա խմբային նկար առնուեցաւ:

Տեղին է նշել որ Պանկլատեչէն, Պանկթոքէն ու Հոնկթոնկէն հայեր եկած էին ներկայ ըլլալու յիշեալ պատմական այցելութեան:

Դպրոցէն ետք շքախումբը առաջնորդուեցաւ Հայոց Նազարեթայ Եկեղեցին, ուր երախտաւորներու համար հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ: Նախագահը չկարողացաւ իր յուզումը զսպել երբ հայոց ազատագրական շարժումի դեկավար Յովսէփ Էմիի տապանաքարը տեսաւ:

Նոյն երեկոյեան West Bengal-ի կառավարիչը ընդունելութիւն մը տուաւ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին: Ներկայ էին West Bengal-ի գլխաւոր նախարարը և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Աղան Սրբազան Հայրը և եկեղեցւոյ առեւտրապետ Տիար Հայկ Սուքիասը:

Յաջորդ օրը ժամը 10-ին նախագահը հրաժեշտ առնելով պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութիւններէ ինչպէս նաեւ Աղան Սրբազան Հօրմէն ու Տիար Սուքիասէն, Հայաստան վերադարձաւ:

ԴԻՒԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ
18 Դեկտ. 1995